

*ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց»*
*ՊՈԱԿ-ի Զարգացման ծրագիր*
*2023-2028թթ.*

# Բովանդակություն

**1.** Հաստատության առաքելությունը ---------------------------------------------------------3

**2.** Հաստատության մասին ընդհանուր տեղեկություններ

2.1 Հաստատության գործունեությունը-----------------------------------------------------------5

2.2 Դպրոցի անձնագիրը-----------------------------------------------------------------------7

**3.** Հաստատության գործունեության վերլուծության և նպատակադրման ոլորտները--11

**4.** Հաստատության գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները

4.1 Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը-------------------------------------12

**5.** Հաստատության գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները--------------------------------------------------------------------------**21**

**6.** Սահմանված նպատակների և խնդիրների սահմանումը, համապատասխան գործողությունները և արդյունքը--------------------------------------------------------38

**7.** Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների պատասխանատուները և ժամանակացույցը------**45**

7.1 Պատասխանատուները-------------------------------------------------------------------52

7.2 Արդյունքների գնահատման չափանիշները-------------------------------------------------53

**8.** Ռիսկերը-------------------------------------------------------------------------------64

8.1 Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները----------------------------------------------------------------------------66

**9.** Վերահսկողության մեխանիզմները--------------------------------------------------67

# 1. Հաստատության առաքելությունը

*«Դպրոցը որակյալ հասարակության հենքն է՝ի դեմս ուսուցչի»*

Հաստատությունը հանդիսանում է վայր, որտեղ երեխան սոցիալականացվում է, ձեռք է բերում պատասխանատվության, հարգանքի, գնահատման արժեքներ, մշակութային տարբերություններն ընդունելու հմտություններ:

Ժամանակակից Հաստատության մոդելը պետք է համապատասխանի երկրի տնտեսության և սոցիալական ոլորտի զարգացման նպատակներին, ուղղված լինի երկրի բարեկեցության աճին և նպաստի մարդկային կարողունակ ներուժի բացահայտմանը, ձևավորմանն ու շարունակական զարգացմանը:

Հաստատության առաքելությունն է ստեղծել նպաստավոր պայմաններ՝ ինքնավստահ, պատասխանատու և որակյալ կրթություն ստացող անհատի ձևավորման ու կայացման համար: Հաստատությունը պետք է դառնա անհատի ներուժի արդյունավետությունը բացահայտելու և ամբողջությամբ օգտագործելու բացառիկ վայր: Հաստատությունը նշվածը կարող է ապահովել աջակցող ու խրախուսող կրթական միջավայր ստեղծելով, որտեղ բոլորն ունեն ձեռքբերումներ արձանագրելու հավասար հնարավորություններ:

Հաստատության առաջնային նպատակն է ստեղծել նպաստավոր պայմաններ, որպեսզի երեխան սովորելու նկատմամբ ունենա սեր՝ ամբողջ կյանքի ընթացքում: Սրան զուգահեռ Հաստատությունը պետք է ապահովի ինքնազարգացմանը և լայնախոհ մտածելակերպ զարգացնելուն նպաստող միջավայր:

Հաստատությունն ապահովելու է նշված ժամանակահատվածում սովորողների կրթական, մշակութային արժեքների հասարակական համակեցության, համագործակցային հանդուրժողականության ու ինքնադրսևորման որակների զարգացումը: Ստեղծվելու են դրական և առողջ միջանձնային հարաբերություններ՝ ուսուցիչ-ուսուցիչ, ուսուցիչ-

աշակերտ, աշակերտ-աշակերտ օղակներում, ինչը կնպաստի երեխայի հուզական, ֆիզիկական և ճանաչողական զարգացմանը:

Հաստատության սկզբունքները կառուցվելու են կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների հիման վրա, մասնավորապես՝ կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը, կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին, ժողովրդավարության սկզբունքների ապահովումը, քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը:

# 2. Հաստատության մասին ընդհանուր տեղեկություններ

## 2.1 Հաստատության գործունեությունը

Հաստատության գործունեությունն ամբողջությամբ ուղղված է լինելու կրթության բնագավառում պետական քաղաքականության ապահովմանը Հաստատությունում, համաձայն որի քաղաքականության հենքն ազգային Հաստատությունն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Նշված նպատակներին ու քաղաքականության ուղղությունների իրականացմանն էլ ուղղված է լինելու առաջարկվող զարգացման ծրագիրը:

***<u>Հաստատության գործունեության սկզբունքներն ու արժեքներն են՝</u>***

- Ապահովել որակյալ և մրցունակ կրթություն բոլոր աշակերտների համար
- Ստեղծել հավասար հնարավորություններ բոլոր աշակերտների համար
- Ցուցաբերել օբյեկտիվություն ու անաչառություն ցանկացած իրավիճակում
- Ապահովել կայացվող որոշումների թափանցիկությունն ու հաշվետվողականություն
- Կենտրոնացում կրթության որակի շարունակական բարելավմանը
- Անհատական մոտեցում աշակերտին թե՛ սովորելու, թե՛ միջավայրում ինքնադրսևորվելու հարցում
- Համագործակցային մոտեցում յուրաքանչյուր ուսուցչի և աշակերտի հետ
- Փոխադարձ հարգանքի մթնոլորտի ապահովում՝ ուսումը և դաստիարակությունն իրականացնող անձանց և սովորողների փոխհարաբերություններում:

Զարգացման ծրագրի մշակման փուլից սկսած՝ հաստատության ամբողջ գործունեությունը միտված է Գյումրի համայնքի, Հաստատության աշակերտների, նրանց ծնողների կարիքներին համապատասխանեցմանն ու հնարավորությունների, ներուժի ամբողջական օգտագործմանը: Հաստատության զարգացման ծրագիրն ու նախատեսվող գործունեությունն ամբողջությամբ համապատասխանում է առկա ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսների ներուժին և հնարավորություններին:

## 2.2 Դպրոցի անձնագիրը

Հաստատությունն իրականացնում է հիմնական կրթություն, որը հանդիսանում է պարտադիր հանրակրթության առաջին և երկրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները:

ՀՀ իրավաբանական պետռեգիստրում

- գրանցման ամսաթիվը՝ 03.02.2003թ.
- վերագրանցման ամսաթիվը՝ 09.09.2013թ.

Դպրոցին տրվել է կրթական գործունեության լիցենզիա՝

- ❖ տարրական ընդհանուր (1-ին աստիճան)- Սերիա Ա N 0562՝ 110 սահմանային տեղ
- ❖ հիմնական ընդհանուր (2-րդ աստիճան)- Սերիա Ա N 0551՝ 150 սահմանային տեղ

Հաստատությունը հիմնվել է 1963թ.՝ որպես ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ հիմնական դպրոց: Ներկայիս գործունեության շենքում տեղակայված է սկսած 2000թ-ից: Հաստատության շենքը տիպային է, երկհարկանի: Հաստատության մուտքերն ունեն թեքահարթակներ, ջեռուցման իրականացման համար տեղադրված է լոկալ ջեռուցման ցանց, առկա է պահակակետ: Առկա են 3 առանձնասենյակներ, 4 դասասենյակներ, 8 առարկայական սենյակներ /կաբինետներ, 1 նախնական զինպատրաստության սենյակ, 1 համակարգչային կաբինետ, ապահովված է ինտերնետ կապի առկայությունը, առկա է բացօթյա սպորտհրապարակ, կահավորված մարզադահլիճ, գրադարան, բուժսենյակ, ուսուցչանոց: Գրադարանի ֆոնդը՝ 372 կտոր գիրք է:

| | Շինությունների և հարմարությունների անվանումը | Քանակը | Մակերեսը մ$^2$ | Ծավալը մ$^3$ |
|---|---|---|---|---|
| 1 | Շենք (եր) | 1 | 1837,0 | 6062,1 |
| 2 | Առանձնասենյակներ | 3 | 66,3 | 218,8 |
| 3 | Դասարաններ | 4 | 128,0 | 422,1 |
| 4 | Առարկայական լսարաններ | 8 | 256,0 | 844,8 |
| 5 | Լաբորատորիաներ | 2 | 64,0 | 211,2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Արհեստանոցներ | 1 | 32,0 | 105,6 |
| 7 | Մարզադահլիճներ | 1 | 342,0 | 2257,2 |
| 8 | Գրադարան (ներ) | 1 | 31,4 | 94,7 |
| 9 | Բուժկետ | 1 | 14,0 | 46,2 |
| 10 | Ճաշարան | 1 | 67,0 | 221,1 |
| 11 | Հանդերձարան (ներ) | 3 | 37,0 | 122,1 |
| 12 | Զուգարան (ներ) | 9 | 50,5 | 166,6 |
| 13 | Տեխնիկական նշանակության այլ սենյակներ | 3 | 11,6 | 38,3 |
| 14 | Մարզահրապարակ (ներ) | 1 | 1750,0 | - |
| 15 | Հանրակացարաններ | - | - | - |
| 16 | Ննջասենյակներ | - | - | - |
| 17 | Համակարգիչներ | 8 | - | - |
| 18 | Համակարգչային այլ տեխնիկա | 3 | - | - |
| 19 | Հեռախոսներ | 1 | - | - |
| 20 | Ջեռուցվող տարածքներ | - | 1786,5 | - |

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատողների թիվը 38 է, դասարանների թիվը՝ 9, աշակերտների թիվը՝ 168:

Դպրոցում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ հինգ աշակերտ: Աշակերտներից մեկը սույն ուսումնական տարում ավարտում է հիմնական կրթությունը:

Դպրոցն ունի համապատասխան հարմարեցումներ.

✓ մուտքի մոտ թեքահարթակներ

✓ հարմարեցված սանհանգույցներ:

Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ: Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

Դպրոցի հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շչեդրինի 7

Հաստատությունն ունի ֆեյսբուքյան գործող էջ՝ շուրջ 1100 հետևորդներով:

https://www.facebook.com/tiv30dproc

Աղյուսակ 1. ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ №30 ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորների քանակը(դրույք) |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | Վարչական անձնակազմ | |
| | Տնօրրեն | 1.0 |
| | Տնօրենի տեղակալ ուսումնական գծով | 1.0 |
| | Վարչատնտեսական մասի համակարգող | 1.0 |
| | Հաշվապահ | 1.0 |
| | Տնտեսվար | 1.0 |
| | Ընդամենը | 5.0 |
| Ուսումնա-օժանդակ անձնակազմ | | |
| | Զինղեկ | 1.0 |

| | | |
|---|---|---|
| | Քաղպաշտպանություն | 0.25 |
| | Համակարգ. Օպերատոր | 1.0 |
| | Գրադարանավար | 1.0 |
| | Դաստ. Աշխ. Կազմ. | 1.0 |
| | Հոգեբան | 1.0 |
| | Սոց. Մանկավարժ | 1.0 |
| | Ուսուցչի օգնական | 1.5 |
| | Ընդամենը | 7.75 |
| Սպասարկող անձնակազմ | | |
| | Հավաքարար | 4.0 |
| | Գործավար | 1.0 |
| | Հնոցապահ | 3.0 |
| | Խոհարար | 0.5 |
| | Ընդամենը | 8.5 |
| | Ընդամենը | 0 |

Ուսուցիչների դրույքների թիվը 12.2
Միջին դրույքաչափը (դրամ) 114 158
Փաստացի ուսուցիչների թիվը 16

# 3 Հաստատության գործունեության վերլուծության և նպատակադրման ոլորտները

1.Դպրոցի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա

2.Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն

3.Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

4.Կառավարման և խորհրդակցական մարմիններ

5.Մանկավարժական համակազմ

6. Աշակերտական համակազմ

7.Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

8.Ուսումնական միջավայր

9.Կրթության որակ

10.Նորագույն տեխնոլոգիաներ, նորարարություններ

# 4. Հաստատության գործունեության՝ առանձնացված յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները

## 4.1 Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

Հաստատությունում իրավիճակի վերլուծության և առկա խնդիրները բացահայտելու համար ուսումնասիրվել են առկա փաստաթղթերը, իրականացվել են մի քանի այցեր Հաստատություն՝ շենքային պայմաններն ու այլ առկա ռեսուրսներն ուսումնասիրելու համար, անցկացվել են հարցազրույցներ Հաստատության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի հետ: Կազմակերպվել են հանդիպումներ մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների ներկայացուցիչների հետ: Քննարկվել է Հաստատությունում առկա իրավիճակը, խնդիրները և լուծման հնարավոր տարբերակները: Հանդիպումների արդյունքում արձանագրվել է, որ Հաստատության բոլոր շահագրգիռ կողմերը բաց են համագործակցության և Հաստատությունում բարեփոխումներ կատարելու պատրաստակամություն ունեն: Հիմնվելով կատարված ուսումնասիրությունների վրա՝ ներկայացնեմ Հաստատության իրավիճակի վերլուծությունը:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| **1. Դպրոցի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա** | |
| 1. Դպրոցն ունի լավ շենքային պայմաններ, տարածքն առանձնացված է ցանկապատով<br>2.Դպրոցն ունի պահակակետի ծառայություն<br>3. Դպրոցն ունի կանաչապատ տարածք<br>4.Դպրոցն ունի շախմատի վերանորոգված դասարան<br>5. Սանհանգույցները վերանորոգման փուլում են<br>6. Նորակառույց ճաշարան<br>7. Դպրոցն ունի պահուստային ելքեր<br>8. Լավ կահավորված սպորտդահլիճ<br>9. Թեքահարթակների առկայություն<br>9.Սանհանգույցները համապատասխանեցված են ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին | 1. Հանդիսությունների դահլիճի բացակայություն<br>2. Համակարգչային թերհագեցվածություն<br>3. Տեսախցիկների հսկողության բացակայություն<br>4. Լաբորատորիաների գույքի անմխիթար վիճակ<br>5. Էլեկտրոնային գրատախտակի և պրոյեկտորի բացակայություն<br>6. Կարելի է նաև արձանագրել, որ առկա տարածքներն ամբողջությամբ և արդյունավետ չեն օգտագործվում: |
| **2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեություն** | |

| | |
|---|---|
| 1. Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները<br>2. Աշխատավարձի, հարկերի ժամանակին և կանոնավոր վճարում | 1. Անհրաժեշտ ուսումնանյութական բազայի անբավարար ապահովվածություն<br>2. «Ծրջանավարտների խորհրդի», «Հոգաբարձուների խորհրդի» բացակայություն և հետևաբար նրանցից ակնկալվող նվիրատվությունների բացակայություն<br>3.Բարեգործությունների արդյունքում լրացուցիչ ֆինանսական միջոցների բացակայություն կամ սակավություն<br>4. Մանկավարժների պարգևավճարների բացակայություն |
| **3. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր** | |
| Դպրոցում առկա է Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի փաթեթը:<br><br>Փաստաթղթերը լրացվում և գործածվում են կարգին համապատասխան: | Անհրաժեշտ է էլեկտրոնային փաստաթղթերի ցանկի և բովանդակային մասի թարմացում և հստակեցում |
| **4. Կառավարման և խորհրդակցական մարմիններ** | |

| | |
|---|---|
| 1. Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կառավարման մարմինը՝ խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքներ | 1. Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ<br>2. Շրջանավարտների խորհուրդ |

## 5.Մանկավարժական համակազմ

| | |
|---|---|
| 1. Հմուտ և գիտակ մանկավարժների առկայություն<br>2. Կամավոր ատեստավորման մասնակցած և 40% շեմը հաղթահարած 1/մեկ/ ուսուցչի առկայություն<br>3. Հերթական ատեստավորման վերապատրաստումների ակտիվ մասնակցություն<br>4. Ռուսերենի խորացված ուսուցում<br>5. Միջոցառումների, ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում<br>6. Համագործակցություն ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ | 1.Կամավոր տեստավորման մասնակցած ուսուցիչների սակավաթվություն<br>2.Ուսուցիչների խրախուսման և պարգևատրումների քիչ հնարավորություններ<br>3. Դասապրոցեսում ՏՀՏ կիրառման բացակայություն և փորձառության պակաս<br>4. Ինքնակամ վերապատրաստումների մասնակցության ցանկության պակաս<br>5. Տարակարգ ունեցող ուսուցիչների բացակայություն<br>6. Համայնքի դպրոցների ուսուցիչների և առարկայական մասնախմբերի հետ համագործակցության բացակայություն |
| **6. Աշակերտական համակազմ** | |

| | |
|---|---|
| 1. Ակտիվ, սովորելու, նորը յուրացնելու մեծ ցանկություն ունեցող աշակերտներ<br><br>2. Հիմնական կրթությունն ավարտած աշակերտները կրթությունը շարունակում են այլ ուսումնական հաստատություններում (վարժարան, քոլեջ, ավագ դպրոց)<br><br>3. Ակտիվորեն մասնակցում է դպրոցի և Հանրապետության կողմից կազմակերպող սպորտլանդիաներում և գրանցել է բազմաթիվ հաղթանակներ<br><br>4. Համբերատար և համագործակցային վերաբերմունք ԿԱՊԿՈՒ աշակերտների նկատմամբ<br><br>5. Հարգանք ուսուցիչների և ողջ անձնակազմի նկատմամբ | 1. Միջդպրոցական միջոցառումների բացակայություն<br>2. Գրադարանից օգտվելու ցանկություն ունեցող աշակերտների պակաս<br>3. Աշակերտական թվաքանակի նվազում<br>4. Ուսման առաջավորների թվի պակաս<br>5. Բնագիտամաթեմատիկական առարկաների նկատմամբ հետաքրքրության պակաս |
| **7.Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ** | |

| | |
|---|---|
| 1. Դպրոցը համագործակցում է Շիրակի ՏՄԱԿ-ի, Մանկապատանեկան հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Հույսի կամուրջ», «Հայկական Կարիտաս», «Նոր լույս» ՀԿ-ների հետ: Հաջող համագործակցություն է եղել նաև ՀՀ ԿԳՄՍՆ և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ:<br>2. ԿՏԱԿ, ԵՄԻՍ<br>3. Դպրոցն ակտիվ համագործակցում է թատրոնների,թանգարանների և այլ մշակութային կենտրոնների հետ: | 1. Նկատվում է համայնքի հետ համագործակցության պասիվություն<br>2. Ծնող-դպրոց մշտական կապի բացակայություն<br>3. Նախկին շրջանավարտների հետ համագործակցության պակաս<br>4. Համայնքի մյուս հիմնական դպրոցների հետ<br>5. Բացակայում է համագործակցությունը ինտելեկտուալ զարգացման կենտրոնների, գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կազմակերպությունների հետ: |
| **8.Ուսումնական միջավայր** | |

| | |
|---|---|
| 1. Վերանորոգված շենքի բարվոք վիճակը,<br>2. Սպորտային գույքով կահավորված ընդարձակ մարզադահլիճի առկայությունը;<br>3. Գրադարանը ապահովված է դասագրքերով, գեղարվեստական, մեթոդական և ծրագրային գրականությամբ:<br>4. Դպրոցի մուտքի մոտ կան թեքահարթակներ ԿԱՊԿՈՒ երեխաների համար:<br>5. Հաստատության սաների շրջանում կա որոշակի ակտիվություն «Մեղու» և «Կենգուրու» առցանց մրցույթների հանդեպ:<br>6. Դպրոցում ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ հանդեսներ, եկեղեցական տոներին նվիրված միջոցառումներ, առողջ ապրելակերպի արշավներ, գրական ցերեկույթներ, ինչպես նաև շաբաթօրյակներ, ծառատունկ:<br>7. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացվածության բարձր մակարդակը:<br>8, Դպրոցում գործում է նաև << Արմաթ>> լաբորատորիա:<br>9. 2018-2019 ուստարուց դպրոցում դասավանդվում է՝Ազգային երգ ու պար՝ առարկան: | 1. ժամանակակից տեխնոլոգիաների ու նորարարությունների կիրառման պակասը:<br>2. Չեն կիրառվում նորարարություններ ուսուցման ու արտադասարանական կրթության գործընթացներում:<br>3. Բացակայում են համակարգչային և սմարթ կաբինետներ՝ հագեցած պրոյեկտորներով և համակարգիչներով<br>4. Հաստատության աշակերտների կողմից առարկայական օլիմպիադաների մասնակցության ցածր մակարդակը, ինչպես նաև Հաստատությունից ուսումնարաններում կրթության շարունակության բարձր տեսակարար կշիռը:<br>5. Դպրոցն ունի բնագիտական առարկաների/ քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, աշխարհագրություն/ լաբորատորիաներ, սակայն բացակայում է համապատասխան գույքը, իսկ առկա գույքը ֆիզիկապես մաշված է և հին: |

| 9.Կրթության որակ | |
|---|---|
| 1.Բարձր կարգապահություն<br><br>2. Ուսուցիչների սովորելու և ինքնակրթությամբ զբաղվելու պատրաստակամություն<br><br>3. Ռուսերենի խորացված ուսուցում<br><br>4. Շախմատի դասարանի առկայություն<br><br>5.Հմուտ և բանիմաց ուսուցիչների առկայություն | 1. Անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բացակայությունը<br>2. Առարկայական լաբորատորիաների և դիտակտիկ պարագաների բացակայությունը<br>3. Հանդիսությունների դահլիճի բացակայությունը<br>4. Համակարգիչների սակավությունը<br>5. Էլեկտրոնային դասերի և տեսադասերի պակաս<br>6. Ուսուցիչների ինքազարգացման ցանկության պակաս |
| **10.Նորագույն տեխնոլոգիաներ, նորարարություններ** | |
| 1. Արմաթ ինժեներական լաբորատորիա<br>2. Ինտերնետ կապ | 1. Սմարթ գրատախտակներ<br>2. Ինտերակտիվ, ինովացիոն աշակերտակենտրոն մեթոդների կիրառման պակաս<br>3. Համակարգիչների թերիազեցվածություն |

# 5. Հաստատության գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակներն ու խնդիրները

## Դպրոցի կառավարումը

Հաստատության կառավարման մարմիններն են՝ ՀՀ Կրթության նախարարությունը, Շիրակի մարզպետարանը, Հաստատության խորհուրդը և տնօրենը: Հաստատության խորհրդակցական մարմիններ են աշակերտական խորհուրդը, ծնողական խորհուրդը, մանկավարժական խորհուրդը և գործող 3 առարկայական մասնախմբերը:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պետական ուսումնական հաստատությունն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ):

Ուսումնական հաստատության կառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվել են հետևյալ խորհրդակցական մարմինները, որտեղ շատ կարևորվում է նաև դպրոցում գործող 3 մեթոդական միավորումների գործունեությունը՝ հումանիտար, բնագիտամաթեմատիկական և տարրական:




Խուրհուրդների ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Ուսումնական հաստատության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ խորհրդակցական մարմիններ՝ հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

Ուսումնական հաստատության կառավարմանը մասնակցում են ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Հաստատության կառավարման խորհրդի կազմը հաստատվել է համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 15 մարտի 2021 թ. N 25-Ն հրամանի:

Վերջին ուստարում խորհուրդը անցկացրել է 3 նիստ՝ սեպտեմբեր, փետրվար և մայիս ամիսներին:

Նշված նիստերի ընթացքում կայացված որոշումների շրջանակը ներկայացնենք ստորև՝

| Նիստի կայացման օր | Ընդունված որոշումների շրջանակ |
|---|---|
| Սեպտեմբեր | Տարիֆիկացիայի հաստատում |
| Փետրվար | 1) Տարիֆիկացիայի հաստատում,<br>2) Հաստիքացուցակի հաստատում |
| Մայիս | 1) Հաստիքացուցակի հաստատում (վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կապակցությամբ )<br>2) Կառավարման խորհրդի նախագահի ընտրություն<br>(Քանի որ կառավարման խորհրդի նախագահը նշանակվել է տնօրենի ժ/պ, տեղի է ունեցել վերընտրություն ) |

Մեր ուսումնասիրությունները, կատարված հարցումները և դպրոցի շահագրգիռ կողմերի հետ քննարկումները հավաստիացնում են, որ Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը սահմանափակվել է նիստերի անցկացմամբ, որոնց ընթացքում քննարկվել են միայն ընթացակարգային ու կանոնադրական պահանջներին համապատասխան հարցերի շրջանակ, կայացվել են այնպիսի որոշումներ, որոնք մտնում են կառավարման խորհրդի պարտադիր իրավասությունների մեջ: Նիստերի միջև ընկած ժամանակահատվածում այլ որևէ ,համագործակցության փորձ, նախաձեռնություն կամ գործողություն չի արձանագրվել ոչ տնօրենի, ոչ էլ կառավարման մարմնի կողմից: Նկարագրված իրավիճակը ցույց է տալիս, որ այն ունի դպրոցի գործունեության վրա բացասական ազդեցություն, ու կարիք կա մշակելու մեխանիզմներ՝ բարելավելու տնօրենի և կառավարման մարմնի համագործակցության գործընթացը:

## Ուսումնական միջավայր

Հաստատության հիմնախնդիրների ցանկում կարելի է նշել ուսումնական միջավայրի նպաստավոր լինելու ցածր մակարդակը, մասնավորապես, ուսումնական միջավայրը համապատասխանում է ավանդական ուսուցման ձևին, որտեղ սովորողը կարող է աշխատել միայն անհատական կամ իր հետ նույն սեղանի շուրջ նստած աշակերտի հետ, գրեթե բացակայում են արդի պահանջներին համապատասխան ճկունությունը, աշակերտներին ինքնադրսևորման հնարավորությունների ընձեռումը, ժամանակակից հետաքրքիր եւ բազմազան ուսուցման մեթոդների կիրառումը, աշակերտակենտրոն եւ բազմանպատակ մոտեցումները: Հաստատության ուսումնական միջավայրը նպաստավոր դառնալու համար դեռևս անհրաժեշտ են բազմաթիվ բարեփոխումների ու միջոցառումների իրականացում: Հաստատության տարբեր դասարանների գերազանց արդյունքները հանրապետական սպորտլանդիաներում, ռազմամարզական հավաքներում: Այսպես, 2022թ. ռազմամարզական երիտասարդական նախազորակոչային ու զորակոչային տարիքի աշակերտների առաջնության համայնքային փուլի առաջին տեղը, 2023թ. ՀՀ և ԱՀ 1-3-րդ, 4-6-րդ դասարանների աշակերտների սպորտլանդիաներում Հաստատության թիմերը գրավել են առաջին պատվավոր տեղերը և այլն: Հաստատությունում 2018-2019 ուստարուց դասավանդվում է «Ազգային երգ ու պար» առարկան:

Հաստատությունում ձևավորված չեն ժամանցային խմբակներ՝ ինտելեկտուալ, արվեստի, արհեստի կամ այլ ոլորտներում:

Դպրոցի հիմնախնդիրներից է նաև գիտելիքահեն միջոցառումներում հաջողությունների սակավությունը, որոշ տարիներին՝ նաև բացակայությունը (օրինակ՝ առարկայական օլիմպիադաներ և այլն):

Աղյուսակ 2. Աշակերտների կողմից առարկայական օլիմպիադաների մասնակցությունը վերջին 5 տարիների ընթացքում

| | Ներդպրոցական փուլ | Տարածքային փուլ | Մարզային փուլ | Հանրապետական փուլ |
|---|---|---|---|---|
| 2018-2019 | 133 | 30 | - | - |
| 2019-2020 | - | - | - | - |
| 2020-2021 | 49 | 26 | 3 | 1 (գրակ.) |
| 2021-2022 | 60 | 17 | - | - |
| 2022-2023 | 73 | 19 | - | - |




Ինչպես տեսնում ենք գերազանց սովորողների թիվը բավականին զիջում է հարվածային սովորողների թվին, բացի դա այն ունի նվազման միտում:

## Մանկավարժական համակազմ

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումների պակասը: Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները սահմանափակվում են ուսուցիչների կողմից պարտադիր վերապատրաստումների մասնակցությամբ: Այսպես, 2023թ․ կամավոր ատեստավորում անցել և 40% շեմը հաղթահարել է ընդամենը մեկ ուսուցիչ: Հաստատության ուսուցիչների կողմից գրեթե չեն օգտագործվում ժամանակակից տեխնոլոգիաները, որոնք կամ բացակայում են, կամ գտնվում են հնամաշ վիճակում: Բացակայում են ուսուցիչների խրախուսման և պարգևատրման միջոցառումները (թերևս կարելի է մեկ դեպք նշել, երբ սպորտային բազում հաջողությունների համար պարգևատրվել է ֆիզկուլտուրայի ուսուցիչը):

Դիտարկենք վերջին 5 տարիներին ուսուցիչների տարիքային բաշխվածությունը

| | 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|---|
| 25-29 | – | 2 | 3 | 2 | – |
| 30-39 | 1 | 4 | 4 | 4 | 6 |
| 40-49 | 2 | 1 | 2 | 1 | 2 |
| 50-59 | 2 | 2 | 4 | 3 | 2 |
| 60 և ավելի | 8 | 6 | 5 | 7 | 8 |
| Ընդամենը | 13 | 15 | 18 | 17 | 18 |

Ինչպես տեսնում ենք դպրոցում ավելի շատ աշխատում են բարձր տարիքի ուսուցիչներ: Եթե նայենք միայն վերջին ուստարվա տարիքային բաշխվածությունը կունենանք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 3. Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը




Ելնելով վերոնշյալից՝ հաստատության տրամադրած կրթության որակը բավական ցածր է, ինչի մասին վկայում են ցածր առաջադիմության, դինամիկայի տվյալները:

## Աշակերտական համակազմ

Հաստատության հիմնախնդիրներիցկարելի է նշել աշակերտների փոքրաթիվ թվաքանակը: Հաստատությունը մեկ հերթով ուսումնական գործընթացը կազմակերպելու դեպքում ունի լիցենզավորված 260 աշակերտի հնարավորություն, հետագայում այն կարող է հասնել 520 աշակերտի (երկհերթ կազմակերպման ու նոր տեղեր ավելացնելու հաշվին), սակայն աշակերտների թվաքանակը 168 է: Նախնական ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ Գյումրի քաղաքի նույն հատվածում մյուս Հաստատություններն ավելի մեծ թվով աշակերտներ ունեն, ինչը փաստում է, որ Հաստատությունը գրավչության խնդիր ունի: Եթե դիտարկենք վերջին տարիների դինամիկման, կունենանք հետևյալ պատկերը.

### Աղյուսակ 4. Թիվ 30 դպրոցի և տարածքում առկա մյուս դպրոցների աշակերտների թվաքանակի SWOT-վերլուծություն




Ինչպես տեսնում ենք, մոտակա տարածքում գտնվող մյուս Հաստատությունների համեմատ կրկնակի, որոշ դեպքերում նույնիսկ եռակի պակաս է թիվ 30 դպրոցի աշակերտների թիվը:

### Աղյուսակ 5. Դպրոցի աշակերտների թվի դինամիկան վերջին հինգ տարիներին




Վերջին 5 տարիներին Հաստատության առավելագույն ծանրաբեռնվածությունը եղել է 197 աշակերտը, մինչ դեռ Հաստատությունը միայն մեկ հերթով աշխատելու դեպքում ունի 260 աշակերտի հնարավորություն։

## Ծնողական խորհուրդ

- Ծնողների ներգրավվածությունը Հաստատության կառավարմանը գտնվում է ցածր մակարդակում։ Ուստի անհրաժեշտ է ակտիվացնել ծնողխորհրդի աշխատանքը.
- Ծնողական խորհրդի կողմից առաջարկությունների պատրաստում և ներկայացում դպրոցի խորհրդի քննարկմանը։
- Ապահովել ծնողների ներգրավումը սովորողների արտադպրոցական և արտադասարանական դաստիարակությանը։
- Աջակցել միջոցառումների կազմակերպմանը։
- Բացահայտել աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ կոնֆլիկտները և աջակցել այդ կոնֆլիկտների լուծմանը։
- Աջակցել խմբակների աշխատանքներին։
- Աջակցել աշակերտների հանգստի ու ժամանցի կազմակերպմանը։
- Ծնողական համայնքին մասնակից դարձնել դպրոցի գործունեությանը։
- Կազմակերպել քննարկումներ և կլոր սեղաններ ծնողների, աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ։

- Աջակցել դպրոցին պարտադիր կրթության իրականացնելու հարցում::
- Աջակցել դպրոցի ուսումնանյութատեխնիկական բազայի հարստացմանը:
- Բացահայտել հնարավոր հովանավորներին և նրանց հետ հաստատել կապեր:
- Ներկայացնել առաջարկներ դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու համար:
- Մասնակցել սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու գործին:
- Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ:
- Ծնողական խորհուրդը իր աշխատանքների մասին հաշվետվությամբ ներկայանա ծնողական համայնքին:
- Վերլուծել տնօրենի ներկայացրած դպրոցի գործունեության մասին հաշվետվությունը և ներկայացնել առաջարկություններ:

## Աշակերտական խորհուրդ

Աշակերտական խորհուրդը նույնպես ակտիվ գործունեություն չի ծավալում: Այդ առումով անհարժեշտ է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը, մոտիվացնել նրանց կազմակերպելու վիկտորինաներ, շնորհանդեսներ, տարբեր նոմինացիաների մրցույթներ՝ աշակերտների կրթական գործունեությունը առավել հետաքրքիր և արդյունավետ դարձնելու նպատակով: Ինչպես նաև դպրոցում կազմակերպել աշակերտների ինքնակառավարման օր, ներգրավել նրանց առաջադիմող աշակերտերի խրախուսման մեխանիզմների մշակմանն ու ետ մնացող աշակերտների ուսման մակարդակի բարձրացմանը:

## Շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդ

Դպրոցի հիմնախնդիրներից է շրջանավարտների և հոգաբարձուների խորհրդի բացակայությունը: Նշված խորհրդների ձևավորումը հնարավորություն կտա սերտորեն համագործակցել դպրոցի գործունեությամբ շահարգիռ անձանց, անհատ ձեռնէրեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների հետ, ովքեր կկարողանան ներդրումների և նվիրատվությունների միջոցով լրացուցիչ ֆինանսական միջոցներ փոխանցել դպրոցին և ներգրավել այլ բարերարների:

Շրջանավարտները հնարավորություն կունենան փոխանցել աշակերտներին իրենց լավագույն փորձը և կօգնեն մասնագիտական կողմնորոշման բարդ և պատասխանատու հարցում:

## Կրթության որակը

Յունեսկո-ի Կրթության մեջ խտրականության բացառման մասին կոնվենցիան (1960թ.) առաջին իրավական փաստաթուղթն է կրթության ոլորտում, որը հստակորեն սահմանում է որակյալ կրթության անհրաժեշտությունը: Նմանապես, Յունեսկո-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն ճանաչում է կրթության որակը որպես կրթության իրավունքի հիմնական բաղադրիչ. «առաջարկվող կրթությունը պետք է համապատասխան որակ ունենա, համապատասխանի երեխայի պահանջներին և նպաստի երեխայի այլ իրավունքների իրացմանը» (Ընդհանուր մեկնաբանություն No. 11 (1999թ.), պարագ. 6):

Յունեսկոն սահմանել է նաև որակյալ կրթության հիմնասյուները, որոնք են

ա) սովորել իմանալու համար, որը ենթադրում է ամենօրյա գիտելիքների զարգացում,

բ) սովորել անելու համար, որը ենթադրում է գիտելիքների պրակտիկ իրագործում,

գ) սովորել համատեղ ապրելու համար, որը ենթադրում է այնպիսի կենսակերպի կառուցում, որտեղ չկա խտրականություն և կան զարգացման հավասար հնարավորություններ,

դ) սովորել լինելու համար, որը ենթադրում է այնպիսի հմտություններ, որոնք հնարավորություն կտան անհատին զարգացնելու իր ողջ հնարավորությունները:

Հայաստանում 2016թ. մարտի 16-ին ընդունվել է կրթության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքը, որտեղ սահմանվել է կրթության որակ հասկացությունը: Այսպես, օրենքի հոդված 3-ի 10-րդ կետը սահմանում է. «կրթության որակ ՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է ՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը եւ ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների»:

Դպրոցի ղեկավարի թիվ 1 հիմնախնդիրներից է կրթության որակի բարելավումը, ինչը հնարավոր կլինի հետևյալ դեպքում

- անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի համալրում,
- առարկայական լաբորատորիաների և դիտակտիկ պարագաների հայթայթում
- Գործընթացներ, որոնց միջոցով վերապատրաստված ուսուցիչները կիրականացնեն աշակերտակենտրոն ուսուցում լավ կահավորված դասասենյակներում և դպրոցներում, ինչպես նաև հմուտ կերպով կիրականացնեն գնահատում՝ նպաստելու ուսուցմանը և նվազեցնելու անհավասարությունները

Ելնելով վերոնշյալ թույլ կողմերից՝ Հաստատությունն ընդհանուր առմամբ ունի նաև գրավչության/համբավի հիմնախնդիր:

Անդրադառնալով դպրոցում բազմակարծիք, ներառական եւ մասնակցային արժեքային միջավայրի վերլուծությանը՝ նշենք, որ մեր կողմից կատարված հարցումները ծնողական խորհրդի, մանկավարժական խորհրդի, աշակերտական խորհրդի, տնօրենի ժ/պ-ի, ինչպես նաև կառավարման մարմնի ներկայացուցիչների շրջանում, վկայում են, որ արժեքային միջավայրը դպրոցում բազմակարծություն և ներառականություն չի ապահովում, քանի որ վերոնշյալ մարմինների ներկայացուցիչները չեն ներկայացրել դպրոցի զարգացման վերաբերյալ որևէ առաջարկություն, ինչպես նաև չեն ներգրավել որոշումների կայացման գործընթացում: Այս հանգամանքը մանկավարժական խորհրդի ներկայացուցիչները բացատրում են նրանով, որ դպրոցի սովորողների մեծամասնությունը սոցիալապես

անապահով խավի ներկայացուցիչներ են և նրանց չի հետաքրքրում մասնակցային գործընթացները: Ըստ կառավարման մարմնի ներկայացուցիչների՝ նրանց կողմից վերոնշյալ շահերի և իրավունքների պաշտպանության գործընթացն իրականացվում է օրենքի շրջանակներում:

Վերլուծությունը փաստում է, որ սովորողները մոտիվացված չեն ներգրավվելու դպրոցում տեղի ունեցող որևէ գործընթացում, հետևաբար նրանք նաև որևէ կերպ չեն դիմել իրավունքների ու շահերի պաշտպանության հարցերով, այսինքն՝ օբյեկտիվորեն հնարավոր չէ գնահատել սովորողների կրթական, սոցիալական, առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Սակայն աշակերտական խորհրդի հետ հանդիպման ժամանակ իմ կողմից խոսվել է աշակերտների իրավունքների, պարտականությունների և ինքնավարության մասին, լսելով դպրոցում կրթության որակի բարձրացման վերաբերյալ աշակերտների առաջարկություններն ու ցանկությունները՝ ընդգրկել եմ սույն զարգացման ծրագրում: Նպատակադրված եմ զարգացնելու դպրոցում առողջ մրցակցություն, ձգտում և կրթական առաջընթաց:

## Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Ուսումնասիրենք նաև Հաստատության բյուջեն:

| Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. | 2023թ.(9 ամիս) |
| Տարեկան ֆինանսավորում | 50996.7 | 47166.1 | 48925.0 | 48211.6 | 36051.7 |
| Տարեկան աշխատավարձի ֆոնդ | 43661.3 | 42942.3 | 41937.4 | 42712.6 | 29151.0 |
| Տարեկան կոմունալ և այլ ծախսեր | 6955.6 | 4122.2 | 4104.7 | 5063.5 | 4446.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Գրքերի գումար | 64.0 | 60.0 | 64.0 | 60.0 | |
| | | | | | |
| Ուսուցչի միջին ամսեկան աշխատավարձ | 95400 | | | | |
| Վարչական միջին ամսեկան աշխատավարձ | 92576 | | | | |



## 2020


գրքերի գումար
0,1%
կոմունալ և այլ
8,7%
աշխատավարձի ֆոնդ
91,1%

## 2021


գրքերի գումար
0,1%
կոմունալ և այլ
8,9%
աշխատավարձի ֆոնդ
91,0%




Ինչպես տեսնում ենք վերջին հինգ տարիներին Հաստատության բյուջեի գրեթե 90%-ը ծախսվել է աշխատավարձի վճարման նպատակով:



## Նորագույն տեխնոլոգիաներ, նորարարություններ

Նորագույն տեխնոլոգիաների կիրառությունը դպրոցում և դասապրոցեսի ընթացքում արդի պայմաններում անհրաժեշտություն է: Մենք գերխնդիր ունենք դպրոցն հարստացնելու նորագույն տեխնոլոգիաներով, ուսուցիչներին մոտիվացնել վերապատրաստվել և աշխատել այդ տեխնոլոգիաներով՝ ապահովելով դրանց ակտիվ կիրառելիությունը, ինչն առավել արդյունավետ կդարձնի ուսումնական պրոցեսը:

Հատված Համաշխարհային բանկի (ՀԲ) Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի գլխավոր տնտեսագետ Իվայլո Իզվորսկու հոդվածից.

՝Նախադպրոցականից մինչև բարձրագույն կրթության բարելավումները և նորարարությունն առաջնահերթ համարող երկրները տնտեսական փոփոխությանն ավելի լավ հարմարվելու և իրենց ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանն օգնելու հարցում առավելություն ունեն: Նորարարությունը ենթադրում է նոր արդյունքների, գործընթացների և ծառայությունների ստեղծում, որոնք ընդլայնում են ձեռնարկությունների և տնտեսությունների կարողությունները: Իրականում ամենանորարար երկրները, որպես կանոն, տնտեսապես առավել հաջողվածն են՛

Մանկավարժական նորարարությունները հիմնականում չեն ներդրվում այն դպրոցներում, որտեղ ուսուցիչնեչը չունեն լիարժեք մեթոդական պատրաստավածություն և նորույթների մասին ինֆորմացիա:

